ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փայլակ Աշոտի Ենգոյան

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԳՈՐԾՈՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

ԻԳ.00.01 – «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ПАЙЛАК АШОТОВИЧ ЕНГОЯН

ФАКТОР «МЯГКОЙ СИЛЫ» ВО ВНЕШНЕПОЛИТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ КИТАЯ

Диссертация на соискание ученой степени кандидата
политических наук по специальности
23.00.01 – «Теория политической науки»

АВТОРЕФЕРАТ

Ереван 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Խ. Ս. Գալստյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ **Վ. Կ. Աթոյան**

քաղաքական գիտությունների թեկնածու **Կ. Գ. Խոջայան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 9-ին, ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում:
Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2022 թ. հուլիսի 19-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Վ. Ս. Պետրոսյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор политических наук, профессор **Х. С. Галстян**

Официальные оппоненты: доктор политических наук, доцент **В. К. Атоян**

кандидат политических наук **К. Г. Ходжаян**

Ведущая организация: **Академия государственного управления Республики Армения**

Защита диссертации состоится 9-ого сентября 2022 г. в 13:00 на заседании специализированного совета 056 «Политология и международные отношения» ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, РА.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ РА.
Автореферат разослан 19-ого июля 2022 г.

Ученый секретарь специализированного совета 056,
кандидат исторических наук, доцент **В. С. Петросян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Արդի միջազգային հարաբերությունների և համաշխարհային քաղաքականության շրջանակներում աշխարհաքաղաքական խոշոր մի շարք դերակատարներ լայնորեն կիրառում են «փափուկ ուժի» հայեցակարգն ու իրենց արտաքին քաղաքականությունը կառուցում այդ գործիքակազմի հաշվառման հիման վրա: Այն իրականացվում է համաշխարհային քաղաքականության բազմաթիվ սուբյեկտների կողմից՝ երբեմն տնտեսական ու ռազմաքաղաքական ազդեցության լծակների կիրառմամբ՝ միաժամանակ ձեռք բերելով այսպես կոչված «խելամիտ ուժի» բնույթ: Վերջին ժամանակներս աշխարհի քաղաքական քարտեզում գնալով իր ուրույն և հաստատուն տեղն է զբաղեցնում Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը:

ՉԺՀ-ն իր ժամանակակից արտաքին քաղաքականության հայեցակարգը մշակվել է մի շարք գործոնների հաշվառմամբ: Առաջինը վերաբերվում է համաշխարհային ինտեգրացիոն գործընթացներին այդ պետության ծանրակշիռ ներգրավվածությանը: Բացի այդ նկատելի է գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացներում ՉԺՀ էական ակտիվացում, որը պայմանավորված է Չինաստանի՝ որպես համաշխարհային տերության հարաճուն կարիքների աճով: Այս հիմնախնդիրը լուծելու նպատակով Չինաստանը, հայտնվելով ռազմատեխնիկական առումով հաջողության հասած երկրներին հետապնդողի դերում, սկսեց լայնորեն կիրառել զարգացած այլ երկրների կողմից փորձություն անցած և հաջողությամբ կիրառված «փափուկ ուժի» քաղաքականությունը: Ներկայումս Չինաստանը գործնականում անդադար կատարելագործում է նման քաղաքականության միջոցներն ու գործիքները՝ լայնորեն օգտագործելով իր հնագույն քաղաքակրթության ինքնատիպ հատկանիշները, երբեմն դրանք ներկայացնելով աշխարհին որպես այլընտրանք արևմտյան ապրելակերպին ու մտածելակերպին:

Թեև, ի տարբերություն ժամանակակից բազմաթիվ հետազոտողների տեսակետների, որոնք այս երևույթը համարում են լոկ պետությունների արտաքին քաղաքականության շարունակություն, հարկավոր է նշել, որ նման քաղաքականության կիրառման դրսևորումներ կարելի է տեսնել նաև ներպետական և ներազգային բազմաթիվ խնդիրներ լուծելիս, այդ թվում ազգի համախմբվածությունն ապահովելու և նրա ինքնությունը պահպանելու նպատակով: Հենց այս հանգամանքն է մերձեցնում բազմաթիվ երկրների, այդ թվում՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նրանց ժողովուրդների ներքաղաքական ու արտաքին քաղաքական մոտեցումները,

որոնք պատմական տարբեր ժամանակաշրջաններում բախվել են ոչ միայն իրենց պատմական հայրենիքում ինքնիշխանության պահպանման խնդրին, այլև օտար երկրներում իրենց էթնիկ համայնքների ուծացման սպառնալիքին: Ընդհանրությունն արտահայտվում է նաև երկու պետությունների «փափուկ ուժի» քաղաքականության բովանդակային ասպեկտներում, որոնք հիմնված են այս հնագույն քաղաքակրթությունների մշակութային-քաղաքակրթական բաղադրիչների վրա:

ՉԺՀ-ի «փափուկ ուժի» քաղաքականությունը նպատակաուղղված է նաև արտասահմանում հայտնված չինական ազգի ներկայացուցիչների ինքնության պահպանմանը, որոնք ձևավորել են շատ պատկառելի չինական սփյուռք աշխարհում: Չինական դիվանագիտությունը լայնորեն օգտագործում է սփյուռքը՝ իր երկրի հեղինակությունը համաշխարհային ասպարեզում բարձրացնելու և իր հարաբերությունները բազմաթիվ պետությունների հետ աշխուժացնելու նպատակով: Չինաստանի արտաքին քաղաքական գործունեության նման փորձի ուսումնասիրությունը թույլ կտա շատ երկրների, այդ թվում՝ Հայաստանին, փոխառել իրենց սփյուռքի հետ փոխգործակցության արդյունավետ ուղիները:

Թեմայի մշակվածության աստիճանը: Նախ և առաջ, անհրաժեշտ է նշել, որ հայ քաղաքագիտական գրականության մեջ գործնականում չկան հետազոտվող խնդրի վերաբերյալ ամբողջական աշխատություններ: Սակայն այս թեմայի առանձին հարցերի շուրջ լույս են տեսել մենագրություններ ու գիտական հոդվածներ, որոնք օգնել են հեղինակին ատենախոսությունը գրելիս:

Տեսական-մեթոդաբանական տեսանկյունից կարևոր դեր են խաղացել հայտնի փիլիսոփա Բ. Ռասելի[1] հայացքները, որը մարդու համար ցանկալի արդյունքի հասնելու միջոց էր համարում ուժը: Միջազգային հարաբերություններում «ուժի» կիրառման հիմնախնդրին են նվիրված ամերիկացի հայտնի հետազոտողներ Գ. Մորգենթաուի և Յու. Կաուֆմանի[2] աշխատությունները, որոնք այս խնդրին անդրադառնում են տարբեր դիտանկյուններից: Առաջինն այս երևույթը համարում է հնարավորություն մի պետության համար պարտադրելու մյուսին իրեն «անհրաժեշտ» որոշումը, երկրորդը՝ որպես բացառապես ռազմական ուժ: Նեոմարքսիստ Ա. Գրամշին «ուժը» համարում է դասակարգային պայքար մղելու միջոց՝ քաղաքական գերիշխանության հասնելու նպատակով[3]: Սակայն, միևնույն ժամանակ, նա ընդգծում է քաղաքացիական հասարակության հսկայական դերը, որի

---

[1] Տե՛ս **Рассел Б.** История западной философии. В 2-х т. М.: Изд-во АСТ, 2017:

[2] Տե՛ս **Morgenthau H.** Politics Among Nations: The Struggle for Power and Peace, Sixth Edition, Peking University Press, Beijing, 1967; **Kaufman Y.** Power and International Relations // Military Policy and National Security, Princeton, 1956:

[3] Տե՛ս **Грамши А**. Тюремные тетради. В 3-х частях. М.: Издательство политической литературы, 1991:

շնորհիվ ձևավորվում, ապահովվում է պետության և այլ սուբյեկտների ազդեցությունը քաղաքական կյանքում:

«Փափուկ ուժի» հայեցակարգի վերաբերյալ ժամանակակից մոտեցման ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեցան ամերիկացի հայտնի հետազոտող Ջ. Նայի աշխատությունները[4] : Հենց նա գիտական շրջանառության մեջ դրեց այս եզրույթը, տվեց դրա սահմանումը, իսկ հետագայում ավելի ընդլայնեց այդ սահմանման բովանդակությունը: Ջ. Նայի «փափուկ ուժը» կոչված է ստեղծելու գրավիչ կերպար՝ դաշնակիցներ ներգրավելու համար: Ջ. Նայը «փափուկ ուժը» դիտում է որպես ներգործության միջոց առավելապես միջազգային ասպարեզում:

Ջ. Նայից մեկ տասնամյակ առաջ այդ երևույթի գնահատականը տվեցին «Անգլիական դպրոցի» ներկայացուցիչները, մասնավորապես՝ Հ. Բուլը, որն առաջ քաշեց ազգային շահերը պաշտպանելիս ֆիզիկական բռնությունը նվազագույնի հասցնելու մասին հարցը[5]:

Հիշատակելի են ևս երկու հեղինակներ, որոնց տեսությունները համահունչ են «փափուկ ուժի» հասկացությանը: Առաջինը Ժ. Բոդրիարի [6] գայթակղման հայեցակարգն է, մյուսը՝ Ժիլ Լիպովեցկիի[7] հրապուրման հայեցակարգը: Վերջինս, մասնավորապես, ներառում է քաղաքական հրապուրումը որպես քաղաքական տեխնոլոգիաների գործիք:

Հետագայում «փափուկ ուժի» սեփական մոտեցումներով հանդես եկան Ջ. Գալարոտին [8] և ուրիշ հետազոտողներ [9] , որոնք զգալիորեն հարստացրին ուսումնասիրությունների դաշտը: «Փափուկ ուժի» նրանց հայեցակարգերը ևս ներառում են «գայթակղման», «հրապուրման», «գրավման», «խորհրդանշական ազդեցության» հասկացությունները: Ջ. Գալարոտիի կարծիքով, քաղաքական տեսության մեջ «փափուկ ուժը» դիտվում է նաև որպես աշխարհի աղավաղված պատկերը ստեղծելու ունակություն՝ հարկադրելով օբյեկտին կայացնել

---

[4] Տե՛ս **Най Дж.** «Мягкая сила» и американо-европейские отношения // «Smart Power Journal» – http://smartpowerjournal.ru/soft-power; **Nye J.** Soft Power: The Means to Success in World Politics. New York, Public Affairs Group, 2004.; **Nye J.** The paradox of American power: why the world's only superpower can't go it alone. N.Y.; Oxford: Oxford Univ. Press, 2002:

[5] Տե՛ս **Bull H.** The Anarchical Society: A Study of Order in World Politics. N.Y.: Columbia University Press, 1977:

[6] Տե՛ս **Бодрийяр Ж.** Соблазн, М., Издательство Ad Marginem. 2000:

[7] Տե՛ս **Липовецки Ж.** Империя эфемерного. Мода и ее судьба в современном обществе, М., Новое литературное обозрение. 2012:

[8] Տե՛ս **Галларотти Дж.** Бремя могущества как парадокс мировой политики // Полис, 2011, № 3, էջ 58–71:

[9] Տե՛ս **Wagner C.** India's Soft Power: Prospects and Limitations. India Quarterly // A Journal of International Affairs. 2010. Vol. 66, № 4, dec. էջ 333-342; **Gray C.S.** Hard power and soft power: the utility of military force as an instrument of pol-icy in the 21st century. Strategic Studies Institute, 2011; **Vuving A.L.** How soft power works // American Political Science Association annual meeting. Toronto. September 3. 2009:

ներգործություն իրականացնող ակտորի համար նպաստավոր քաղաքական որոշումներ:

«Փափուկ ուժի» հայեցակարգի վերաբերյալ յուրատեսակ մոտեցումներ առաջադրեցին չինացի հետազոտողները: «Փափուկ ուժի» չինական ըմբռնումը շատ դեպքերում Ջ. Նայի առաջադրած հայեցակարգի շարունակությունն է: Չինացի վերլուծաբանների գերակշիռ մասը հետևում է Նայի սահմանմանը: Նրանք զգալիորեն ընդունում են Ջ. Նայի սահմանած «փափուկ ուժի» դրույթները[10]: Սակայն չինացի հետազոտողներից շատերի կարծիքով՝ «փափուկ ուժի» ֆենոմենը, բացի միջազգային հարաբերությունների տեսության ոլորտից, կարելի է լիովին կիրառել նաև ներքին քաղաքականության մեջ: Նրանք հակված են դիտելու «փափուկ ուժը» նաև որպես ազգային համախմբման ու նույնականացման, հասարակական բարոյականության ամրապնդման կարևոր միջոց[11]:

Ժամանակակից հետազոտողների քաղաքագիտական որոշ վերլուծություններ նվիրված են «փափուկ ուժի» կիրառման գործիքակազմի բացահայտման հիմնախնդրին: Այդ առումով աչքի են ընկնում արևմտյան դպրոցի քաղաքագետների հետազոտությունները [12] , որոնք արտացոլում են Ջ. Նայի գաղափարների գործնական կիրառման ուղիները: Սակայն այդ հիմնախնդիրը դուրս չի մնացել նաև ռուսաստանյան քաղաքական գիտության հետաքրքրությունների շրջանակներից: Դրան են նվիրված շատ հետազոտություններ, որոնք վերաբերում են շատ երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի և Չինաստանի «փափուկ ուժի» կիրառման փորձին[13]:

---

[10] Տե՛ս **Цзайци Лю.** «Мягкая сила» в стратегии развития Китая // ПОЛИС: Полит. исслед. 2009. № 4, էջ 149-155; **Li Mingjiang.** Introduction: Soft Power: Nurture Not Nature // Soft Power. China's Emerging Strategy in International Politics. New York: Lexington books, 2009, էջ 1-18:

[11] Տե՛ս **Zhang Ji, Sang Hong.** Wenhua: guoji zhengzhi zhong de «ruan quanli» (Culture: "Soft Power" in International Politics) // Shehui zhuyi yanjiu (Socialist Studies). 1999, № 3, էջ 41-44; **Zheng Yongnian.** Zhangchi guoji zhengzhi Zhong de «ruan liliang» yiji dui zhongguo «ruan liliang» de guancha ("Soft Power" in International Politics and Observations on China's Soft Power) // Shijie jingji yu zhengzhi (World Economy and Politics). 2007, № 7, էջ 6-12; **Yu Xintian.** «Ruan shili» jianshe yu zhongguo duiwai zhanlue ("Soft Power" Construction and China's Foreign Strategy) // Guoji wenti yanjiu (International Studies). 2008, № 2, էջ 15-20; **Zhang Yongjing.** The Discourse of China's soft power and its Discontents // Soft power. China's Emerging Strategy in International Politics. New York: Lexington books, 2009, էջ 45-60:

[12] Տե՛ս **Fraser M.** Weapons of Mass Distraction: "Soft Power" and American Empire. Macmillan, 2014; **Armitage R., Nye J.** CSIS Commission on Smart Power: A Smarter, More Secure America. CSIS, 2007; **Zhang J.** Buddhist Diplomacy: History and Status Quo. Figueroa Press, 2012 և այլք:

[13] Տե՛ս Рост исламской «мягкой силы»: Кто и как использует ислам? – https://caa-network.org/archives/14876; **Гаспарян П.** Теоретические основы понятия «умная сила». – http://lawinrussia.ru/content/teoreticheskie-osnovy-ponyatiya-umnaya-sila; **Фридман Дж.** Следующие 100 лет: Прогноз событий XXI века. М.: Эксмо, 2010; **Василенко Е.** Культурная дипломатия как инструмент «мягкой силы» государства – http://www.perspektivy.info/print.php?ID=375201; **Борох О., Ломанов А.** Скромное обаяние Китая // Pro et Contra. 2007, № 6 (39), էջ 41-60 և այլք:

Չինաստանի արտաքին քաղաքականության մեջ «փափուկ ուժի» գործոնին հատկացված դերն ավելի խորությամբ հասկանալու համար անհրաժեշտ էր մանրամասն վերլուծել արտաքին քաղաքականության հայեցակարգի փոխակերպումը վերջին տասնամյակների ընթացքում: Արևմտյան (այստեղ անպայման պետք է առանձնացնել Հ. Քիսինջերի[14] աշխատությունը), ռուսական[15] և չինական[16] քաղաքական գրականության մեջ այս խնդրին զգալի տեղ է հատկացված: Միևնույն ժամանակ, արդի փուլում ՉԺՀ արտաքին քաղաքականության հայեցակարգի փոխակերպման նախադրյալներն ու պատճառները բացահայտելու խնդիրը դեռևս հիմնովին քննված չէ:

Դրա բովանդակությունը մեծ մասամբ արտահայտվում է ՉԿԿ Կենտկոմի համագումարների և պլենումների նյութերում[17], ՉԺՀ նախագահների ելույթներում և

---

[14] Տե՛ս **Киссинджер Г.** О Китае. М.: АСТ, 2014:

[15] Տե՛ս **Седунов А.В.** Внешнеполитическая стратегия Китая на рубеже XX-XXI вв. – http://politika.snauka.ru /2014/04/1528; **Стегареску М.Н., Колпакова Т.В.** «Мягкая сила» как механизм реализации интересов КНР на международной арене // Россия и Китай: проблемы стратегического взаимодействия: сб. ст. Чита: Изд-во Забайкальского гос. ун-та, 2011, № 9, էջ 79–82; **Хененкова Е.** Дом, который построил Китай: сообщество общей судьбы для всех народов. – http://regnum.ru/news/2343234.html; **Тараканова Т.С.** Внешнеполитические концепции Китайской Народной республики // Научно-технические ведомости СПбГПУ. Гуманитарные и общественные науки, №3 (250), 2016, էջ 68-73; **Басов А.** Китай как новая космическая держава // Проблемы Дальнего Востока, РАН, № 5, 2010, с. 20-31 и др.

[16] Տե՛ս **Чжао Хуашэн.** Китай, Центральная Азия и Шанхайская организация сотрудничества, М.: Московский Центр Карнеги, 2005; **Ли Син.** Внешнеполитическая философия современного Китая: о связи между научным развитием и гармоничным миром // Россия и Китай в евразийской интеграции. Сотрудничество или соперничество? СПб.: Нестор-История, 2015; **Yan Xuetong.** Yichao duo qiang zouxiang zhongmei liang chao duo ji hua shiwei (One superpower and many powers are moving towards China and the United States, two superpowers, and multi-polarization is declining) // «Guancha zhe» (Observer) – http://www.guancha.cn/multiple-pattern-super-country/2012_01_13_64309.shtml; **Qing J.** How China's ancient past can shape its political future. Princeton, NJ, 2013; **Yaqing Qin.** Quanqiu zhili shiling yu zhixu linian de jiangou (Failure of Global Governance and Establishment of Order Concept) // Shijie jingji yu zhengzhi (World economics and politics). 2013a, № 4, էջ 32–54; **Peng Y.** On the changes in the international order // Contemporary international relations. 2014, Vol. 24, № 4, էջ 34–63; **Xingzuo Wu.** Guoji lei qigan fazhan xianzhuang, wenti yu qiangjin fangxiang zuotanhui jiyao (Summary about Discussion Meeting the Present Situation in International Periodicals, Problems and Trends of Development) // Xiandai guoji guanxi (Contemporary International Relations). 2013, № 1, էջ 12–32; **Sun Xuefeng.** Hexie shijie linian yu zhongguo guoji guanxi lilun yanjiu (The Concept of Harmonious World and Theoretical Research on China's International Relations) // Jiaoyu kexue yanjiu (Teaching and Research). 2007, № 11, էջ 55–60; **Yue Keping.** Hexie shijie linian xia de zhongguo waijiao (The ideal of a harmonious world and Chinese diplomacy). Liaowang xinwen zhoukan (Weekly periodicals), 2007, № 17, էջ 30-31 և այլք:

[17] Տե՛ս **Буров В.Г.** XVIII съезд КПК и стратегия развития Китая / Новая и новейшая история, РАН, № 3, 2013, էջ 14-33; 2004 nian: shiliu jie si Zhong quanhui qianhua zhizheng nengli (2004: The Fourth Plenary Session of the Sixteenth Central Committee Strengthens the Governing Ability) // Cankao xiaoxi (Reference news) – http://column.cankaoxiaoxi.com/2012/1029/111560.shtml; **Li Zhangchun.** Guanyu «Zhonggong Zhongyang guanyu shenhua wenhua tizhi gaige tuidong shehui zhuyi wenhua da fazhan da fanrong ruogan zhongda wenti de jueding» de shuoming (Explanation of the "Decision of the Central Committee of the Communist Party of China on Deepening the Reform of the Cultural System to Promote the Development and Prosperity of Socialist Culture") // Qianxian (Frontline). 2011, էջ 15-22 և այլք:

խոսքերում[18]: Դրանք օգնել են հեղինակին հստակ պատկերացնելու Չինաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն արդի փուլում, ինչպես նաև այլ պետությունների քաղաքականության վրա Չինաստանի ազդեցության ձևերն ու միջոցները, այդ թվում՝ «փափուկ ուժի» կիրառմամբ:

Չինական «փափուկ ուժի» էությունն ու առանձնահատկությունը տարբեր դիտանկյուններից պարզելու հիմնախնդիրը արծարծված է բազմաթիվ չինացի քաղաքագետների և սոցիոլոգների, ինչպես նաև տարբեր մակարդակների կուսակցական գործիչների աշխատություններում: Հարկ է նշել, որ այս խնդիրը սերտորեն կապված է ՉԺՀ-ում չինական մշակույթի զարգացման համապարփակ հայեցակարգի մշակման հետ: Հենց դա է ընկած հետազոտողների առաջարկած «չինական մշակույթի փափուկ ուժի» մոդելի հիմքում[19]: Հետագայում այս մոդելի բովանդակությունը որոշակիորեն փոխակերպվեց, ինչը հանգեցրեց հետազոտողների կողմից չինական մշակույթի արժեքային կողմնորոշումների շեշտադրմանը[20]:

---

[18] Տե՛ս Translation of Chinese President Hu Jintao's Remarks at Yale // «The Wall Street Journal» – https://www.wsj.com/articles/SB114566179560133020; Ху Цзиньтао об углубленном претворении в жизнь научной концепции развития // «Женьминь Жибао» – http://russian.china.org.cn/china/archive/shiqida/2007-10/15/content_9060001.htm#:~:text=Ху%20Цзиньтао%20далее%20сказал%2C%20что,усиливать%20и%20улучшать%20партийное%20строительство; 22. Полный текст доклада, с которым выступил Ху Цзиньтао на 18-м съезде КПК // «Xinhua wang» – http://russian.people.com.cn/31521/8023973.html; **Цзян Цзэминь.** О социализме с китайской спецификой. Т. 2-3. М., 2004; Полный текст доклада, с которым выступил Си Цзиньпин на 19-м съезде КПК // «Жэньминь жибао» – http://russian.news.cn/2017-11/03/c_136726299.htm:

[19] Տե՛ս **Zhang Guozuo.** Zhongguo wenhua ruan shili yanjiu lungang (Outline of Research on Chinese Cultural Soft Power) // Zhongguo shehui kexuebao (China Social Sciences Journal). 2015; **Chen Hongyu.** Dangdai Zhongguo wenhua ruan shili wenti yanjiu (Research of the Soft Power of Contemporary Chinese Culture) – http://cdmd.cnki.com.cn/Article/CDMD-80000-1013273672.htm; **Li Pei.** Wenhua de liliang (The Power of Culture) // Renmin ribao (People's Daily) – http://theory.people.com.cn/n1/2017/1027/c40531-29612098.html; **Gao Zhanxiang.** Wenhua li (Cultural Power). Beijing daxue chuban she (Beijing University Press), 2007; **Chen Hongyu.** Dangdai Zhongguo wenhua ruan shili wenti yanjiu (Research of the Soft Power of Contemporary Chinese Culture) – http://cdmd.cnki.com.cn/Article/CDMD-80000-1013273672.htm; **Yang Taoyuan.** Tisheng Zhongguo ruan shili. Juedu zhongyang zhengzhi ju di shisan ci jiti xuexi (Enhancing China's Soft Power. Interpretation of the 13th Collective Study of the CPC Central Committee) // Liaowang xinwen zhoukan (Outlook News Weekly). 2004, № 6, էջ 14-15; **Yun Shan**. Wenhua zijue, wenhua zixin, wenhua ziqiang – Dui fanrong fazhan zhongguo tese shehui zhuyi wenhua de sikao (Cultural Consciousness, Cultural Confidence, Cultural Self-Strengthening – Thoughts on the Prosperity and Development of Socialist Culture with Chinese Characteristics) // Hongqi wengao (Red Flag Manuscript). 2010. № 16, էջ 4-8; **Yang Jinhai.** Zhongguo xiandai wenhua jianshe xin gaochao (The New Climax of Chinese Modern Cultural Construction) // Liaowang xinwen zhoukan (Outlook Weekly). 2011, էջ 22-23:

[20] Տե՛ս **Li Jianhua.** Shehui zhuyi hexin jiazhiguan de tilian (Refinement of the Core Values of Socialism) // Hongqi wengao (Red Flag Manuscript). 2012, № 5, էջ 9-12; **Yang Ming.** Guojia yu gongmin: Shehui zhuyi hexin jiazhiguan gaikuo de jiben lujin (Nation and Citizen: The Basic Path to Summarize the Core Values of Socialism) // Hongqi wengao (Red Flag Manuscript). 2012, № 4, էջ 8-11; **Li Xiguang.** Zhongguo ruan shili jianshe zhong de wu da kunjing (Five Dilemmas in China's Soft Power Construction) // Ruan shili yu zhengfu chuanbo guoji yantao hui lunwen ji (Proceedings of the International Symposium on Soft Power and Government Communication). Beijing, 2009, էջ

Արդի փուլում Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի մշակմանը զուգահեռ՝ շատ հետազոտողներ գիտական շրջանառության մեջ դրեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ներդաշնակ զարգացումը», «համաշխարհային ներդաշնակությունը», «համընդհանուր միասնությունը»՝ հիմնված միջքաղաքակրթական փոխգործակցության զարգացման վրա, որն էլ հենց Չինաստանի ժամանակակից «փափուկ ուժի» հիմնական բովանդակությունն է[21]:

Ժամանակակից պայմաններում փոփոխվող համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ շատ ժողովուրդներ և պետություններ աշխարհում իրենց ազդեցությունն ապահովելու համար, «փափուկ ուժ» կիրառելու հետ մեկտեղ, դիմում են տնտեսական և ռազմաքաղաքական ճնշման քայլերի, որը բազմաթիվ քաղաքագետներ բնորոշում են որպես «խելամիտ ուժ»: Որոշ հետազոտողներ զարգացրել են այս հայեցակարգը թե՛ տեսական, թե՛ գործնական տեսանկյունից[22]:

«Փափուկ ուժի» քաղաքականության կիրառման գործում առանձնահատուկ դեր է խաղում պետությունների կրթական քաղաքականությունը: Այս ոլորտում Չինաստանն առաջ է շարժվում բազմաթիվ զարգացած երկրների արդեն հարթած ճանապարհով: Պետությունների փորձն այս ուղղությամբ լուսաբանվել է բազմաթիվ ռուս և արևմտյան քաղաքագետների աշխատություններում[23]:

13-29; **Yang Shengping.** Zhongguo wenhua ruan shili tishen de san ge cengmian (Three Levels of the Improvement of Chinese Cultural Soft Power) // Shengbing shijie (World's Sound Screen) 2012. № 3, էջ 66:

[21] Տե՛ս **Men Honghua.** Zhongguo guannian biange de zhanlüye lujing (The Strategic Path of China's Conceptual Change) // Wanxia: xia ban yue (Sunset: The Second Half of the Month). 2007, № 7, էջ 39-41; **Xia Liping, Jianxi Yuan.** Zhongguo hepin jueqi (China's Peaceful Rise). Zhongguo shehui kexue chuban she (China Social Sciences Press). Beijing, 2004; **Zhang Zhizhou.** Hanyu re bu dengyu «Zhongguo ruan qianli weixie» (Passion for Chinese does not mean "China's soft power threat") // Zhongguo yu shijie guancha (China and the World Watch). 2006. № 3, էջ 194-201; **Young Nam Cho, Jong Ho Jeong.** Zhongguo de ruan shili: Taolun, ziyuan yu qianjing (China Soft Power: Discussion, Resources, and Prospects). // Yazhou yanjiu (Asia Survey). 2009. № 4. էջ 42-46; **Guo Jianning.** Dandai Zhongguo de wenhua zijue – jin shinian wenhua jianshe zhanlüe gouxiang (Cultural Consciousness in Contemporary China – Strategic Conception of Cultural Construction in the Past Decade) // Zhongguo zaixian (China Online) – http://www.chinadaily.com.cn/dfpd/17jlzqh/2011-10/14/content_13898588.htm; **Han Baojiang.** Shiqi jie liu Zhong qianhui: ba wenhua jianshe naru fazhan zongti guihua (The Sixth Plenary Session of the Seventeenth Central Committee: Incorporating Cultural Construction into the Overall Development Plan) // Souhu xinwen (Sohu News) – http://star.news.sohu.com/20111106/n324694699.shtml:

[22] Տե՛ս **Вавилов Н.Н.** Некоронованные короли красного Китая // СПб.: Карпе Дием, 2016, **Lu Gang.** Wenhua shili ruo rang zhongguo shi fen (Weak Cultural Strength Makes China Lose Points) // Shiji xin (Line of the Century), էջ 45-46; **Fang Changping.** Zhong Mei ruan shili bijiao ji qi dui Zhongguo de qishi (Comparison of China and America's Soft Power and Lessons for China) // Shijie jingji yu zhengzhi (World Economy and Politics). 2007, № 7, էջ 21-27:

[23] Տե՛ս **Цветкова Н.А.** Оценка эффективности международной образовательной политики СССР и США в годы «холодной войны» / 200 лет российско-американских отношений: наука и образование: сб. ст.; под ред. А.О. Чубарьяна и Б.А. Рубла, М.: ОЛМА Медиа Групп, 2007, էջ 378-393; **Торкунов А.** Образование как инструмент "мягкой силы" во внешней политике России. / Вестник МГИМО, № 4 (25), 2012, էջ 67-92 և այլք:

Հետազոտության օբյեկտը «փափուկ ուժի» գործոնն է Չինաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններում:

Հետազոտության առարկան Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում «փափուկ ուժի» քաղաքականության բովանդակության, կիրառման ձևերի և գործիքների իմաստավորումն է:

Ատենախոսության նպատակն է վերլուծել Չինաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության շրջանակներում «փափուկ ուժի» կիրառման տեսական-հայեցակարգային հիմնավորումը, հաշվի առնելով համաշխարհային քաղաքականության մեջ երկրի ազդեցության աճը:

Առաջադրված նպատակն իրագործելու համար կարևորվել է **հետազոտական հետևյալ խնդիրների** լուծումը.

1. Վերլուծել «փափուկ ուժ» հասկացության էությունը ժամանակակից քաղաքական գիտության մեջ:

2. Բացահայտել և գնահատել «փափուկ ուժի» քաղաքականության ժամանակակից միջոցների և գործիքների արդյունավետությունը:

3. Հետազոտել Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի փոխակերպման նախադրյալներն ու դրա ժամանակակից մեկնաբանությունը:

4. Բացահայտել «փափուկ ուժի» քաղաքականության տեղն ու դերը, ինչպես նաև դրա հայեցակարգային հիմնավորման եղանակները Չինաստանի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ:

5. Վերլուծել Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը «խելամիտ ուժի» կիրառման վրա հիմնված քաղաքականության փոխակերպելու գործընթացը:

6. Բացահայտել Չինաստանի «փափուկ ուժի» կիրառման այն միջոցներն ու ձևերը, որոնք, ելնելով հայ և չինացի ժողովուրդների մշակութային-քաղաքակրթական ընդհանրությունից, կարող են պահանջված լինել Հայաստանի արտաքին քաղաքական գործունեության մեջ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության նպատակին ու առաջադրված խնդիրների լուծմանը հասնելու համար կիրառվել են գիտական վերլուծության համալիր, պատմահամակարգային, սոցիոմշակութային, համեմատական և գործառական մեթոդները: Առաջին պլանում համակարգային մեթոդն է, որը թույլ է տվել դիտարկել Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը որպես ամբողջական համակարգ, որն արտացոլում է այդ գործունեության տարբեր միջոցների և գործիքների կիրառման բնույթը: Պատմականության սկզբունքը թույլ է տալիս դիտարկել չինական իրականությունը պատմական դիտանկյունից և հասկանալ երկրի արտաքին քաղաքականության

հայեցակարգի փոխակերպումների էությունը, ինչպես նաև բացահայտել «փափուկ ուժի» քաղաքականության սկզբունքների ձևավորման նախադրյալները: Համեմատական մեթոդը թույլ է տվել վեր հանել չինական դիվանագիտության մոտեցումների նմանություններն ու տարբերությունները բազմաթիվ երկրների արտաքին քաղաքականության հետ, որոնք ևս դիմում են «փափուկ ուժի» քաղաքականությանը: Սոցիոմշակութային մեթոդը հնարավորություն է տվել նորովի քննելու չինական «փափուկ ուժի» երևույթը, մատնանշելու դրանում մշակութային-քաղաքակրթական, արժեքային ասպեկտների կիրառումը, որոնք երբեմն ձեռք են բերում վճռորոշ նշանակություն ոչ միայն արտաքին քաղաքական գործունեության մեջ, այլև ազգային միասնության ամրապնդման ու ինքնության պահպանման համար՝ ներառյալ հսկայական սփյուռքը: Հետազոտական համապատասխան աշխատանքի իրականացման արդյունքում չինական «փափուկ ուժը» վերլուծվել է գործառնական տեսանկյունից, որը բացահայտել է այդ քաղաքականության արդյունավետության հիմքերը:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է «փափուկ ուժի» քաղաքականությունը որպես և՛ արտաքին քաղաքական, և՛ ներքին խնդիրների լուծման միջոց կիրառելու հարցում ՉԺՀ-ի փորձի ընդհանրացման անհրաժեշտությամբ և ընդհանուր առմամբ հանգում է հետևյալին.

1. Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը ներկայացվում է որպես պատմական կարճ ժամանակահատվածում զգալի փոխակերպումների ենթարկված և լիովին այդ հասկացության սահմանմանը համապատասխանող երևույթ, որը հսկայական նյութական ռեսուրսների առկայությունը համադրում է իր ավանդական քաղաքակրթության անկրկնելիության ու գրավչության քարոզչության հետ՝ երբեմն հանդես գալով որպես գլոբալ զարգացման այլընտրանքային հարացույց:

2. Վերլուծվում է Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականության բովանդակությունը՝ շեշտը դնելով հենց մշակութային-արժեքային բաղադրիչի վրա, որը պետության կողմից կիրառություն է գտնում հիմնականում հասարակության մեջ կրթամշակութային և դաստիարակչական աշխատանքներում՝ դարձնելով նրան մշակութային առումով ավելի զարգացած և համախմբված, որը կարող է համաշխարհային հանրությանը ներկայանալ իբրև ժամանակակից և գրավիչ բևեռ:

3. «Փափուկ ուժի» քաղաքականությունը դիտվում է ոչ միայն որպես արտաքին քաղաքական խնդիրների լուծման միջոց, այլև որպես «դեպի ներս» ուղղված քաղաքականություն՝ օգտագործելով մշակութային-քաղաքակրթական լծակներ, որոնք նպատակաուղղված են սեփական ժողովրդի ինքնության պահպանմանը ինչպես պետության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

4. Ընդգծվում է «փափուկ ուժի» քաղաքականության չինական և արևմտյան մոդելների գործիքակազմերի տարբերությունը. մասնավորապես, Չինաստանը մերժում է իր սոցիալ-քաղաքական չափանիշները այլ պետությունների պարտադրելու գործելակերպը՝ նրանց տարածքում որոշակի քաղաքական ուղղվածությամբ հասարակական կազմակերպություններ ստեղծելու միջոցով: Մատնանշվում է Չինաստանի ձգտումը՝ հիմնավորելու համաշխարհային զարգացման տնտեսական, մշակութային-քաղաքակրթական այն առաջնահերթությունները, որոնք ուղղված են ոչ թե ժողովուրդներին բաժանելուն, այլ նրանց համախմբելուն՝ հիմնվելով ժամանակակից աշխարհի՝ իբրև «ընդհանուր ճակատագրերի» հանրույթի ընկալման վրա:

5. Հայեցակարգային տեսանկյունից վերլուծվել է Չինաստանի գործունեությունը «Մեկ գոտի-մեկ ճանապարհ»նախագծի իրականացման ուղղությամբ, որն իրենից ներկայացնում է «խելամիտ ուժի» քաղաքականություն՝ ինչպես փափուկ, այնպես էլ կոշտ միջոցների կիրառմամբ, և ուղղված է ոչ միայն եվրասիական և, առհասարակ, հաղորդակցությունների գլոբալ ցանցի բարելավմանը, այլև կայունության հաստատմանը, ժողովուրդների ներդաշնակ զարգացման համար սոցիալ-մշակութային պայմանների ստեղծմանը:

6. Կատարվում է հարավկովկասյան հանրապետություններում «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման հարցում Չինաստանի մոտեցումների համեմատական վերլուծություն, բացահայտվում են այդ երկրներից յուրաքանչյուրի հետ տարվող քաղաքականության առաջնահերթությունները, կանխատեսվում են Չինաստանի հետ նրանց մերձեցման հեռանկարները, ինչպես նաև նրանց մասնակցությունը ենթակառուցվածքային ծրագրերին:

7. Վերլուծելով հայկական և չինական հնագույն քաղաքակրթությունների մշակութային-քաղաքակրթական հիմքերը, որոնցում յուրօրինակ կերպով համատեղվում են՝ ավանդույթը նորարարության և անհատականությունը համայնքային-պահպանողական մոտեցումների հետ, ատենախոսությունում բացահայտվում են Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականության այն գործիքները, որոնք կարող են կիրառվել Հայաստանի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Արդի միջազգային հարաբերություններում, ինչպես նաև տարբեր ժողովուրդների հասարակական կյանքում նորովի է արժևորվում «փափուկ ուժի» կիրառման քաղաքականությունը, որի գործիքակազմը թույլ է տալիս ոչ միայն վարել արդյունավետ արտաքին քաղաքականություն, այլև ամրապնդել ազգերի

միասնությունը և հաղթահարել դրանց նույնականացման խնդիրները: Ժամանակակից քաղաքագիտությունը մեծ տեղ է հատկացնում այդ երևույթների հայեցակարգային վերլուծությանը: Հետևաբար ատենախոսության առանցքային դրույթները կարող են կիրառվել գիտական և գիտակրթական հետազոտություններում:

Գործնական կիրառելիության տեսանկյունից ատենախոսության մեջ ամփոփված եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտագործվել երկրների արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ռազմավարությունների մշակման և կատարելագործման ընթացքում, ինչպես նաև բարձրացնել այդ ոլորտները ներկայացնող կառույցների գործունեության արդյունավետությունը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը կատարվել է ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնում: Ատենախոսության թեմայով հեղինակը հրապարակել է 9 գիտական հոդված, որոնցից մեկը՝ ռուսաստանյան գիտական պարբերականում:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է առաջադրված խնդիրների տեսական մշակվածությամբ, նպատակով, ծավալով ու բնույթով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 166 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետզոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հիմնախնդրի գիտական ուսումնասիրության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, ինչպեես նաև գիտական ատենաղոսության նորույթն ու առաջարկվող հիմնախնդիրների կիրառման հնարավոր ուղղությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Փափուկ ուժի» հայեցակարգի տեսամեթոդական հիմքերը»** գլուխը բաղկացած է երկու ենթաբաժիններից, որոնցում քննարկվում են «փափուկ ուժի» էությունը և դրա իրագործմանը վերաբերող հայեցակարգերը:

Առաջին՝ **«Փափուկ ուժի» ժամանակակից հայեցակարգի ձևավորումը»** ենթագլխում ներկայացվում են «փափուկ ուժի» հայեցակարգի ձևավորման հիմնական պատճառները և նպատակները, ինչպես նաև տարբեր տեսաբանների

մոտեցումները այդ երևույթին: Հիմնավորվում է այն դրույթը, ըստ որի «փափուկ ուժը» «կոշտ ուժի» հետ մեկտեղ կարող է արդյունավետ իրագործվել արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար: Բացահայտվում է չինական մոտեցումը, որը «փափուկ ուժը» դիտարկում է ոչ միայն որպես արտաքին, այլև ներքին քաղաքական խնդիրների լուծմանն ուղղված գործիք:

Երկրորդ՝ **«Փափուկ ուժի» կիրառման գործիքակազմը համաշխարհային քաղաքականության հիմնական դերակատարների կողմից»** ենթագլխում դիտարկվել են «փափուկ ուժի» իրագործման հիմնական գործիքները, ինչպես նաև տարբեր երկրների կողմից այն կիրառելու ռազմավարությունները: Բացահայտվել է, որ արևմտյան երկրները իրենց «փափուկ ուժի» ռազմավարության շրջանակներում շեշտը դնում են իրենց քաղաքական համակարգի, ապրելակերպի և ազատական արժեհամակարգի քարոզչության վրա, մինչդեռ Չինաստանի ռազմավարությունը հիմնված է չինական քաղաքակրթության, պատմության և լեզվի հարստության բացահայտման վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«Փափուկ ուժը» որպես Չինաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության կարեվոր բաղադրիչ»** գլուխը բաղկացած է երեք ենթաբաժիններից, որոնցում ներկայացվում են Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի կայացման գործընթացը և «փափուկ ուժի» դերը ինչպես Չինաստանի արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական ծրագրերի իրականացման գործում:

Ատենախոսության երկրոդ գլխի առաջին՝ **«ՉԺՀ-ի ժամանակակից արտաքին քաղաքական հայեցակարգի ձևավորումը»** ենթագլխում ցույց է տրվում, որ վերջին տարիների ընթացքում Չինաստանը սկսում է վարել ավելի ակտիվ արտաքին քաղաքականություն և լուրջ քայլեր է ձեռնարկում ոչ միայն տարածաշրջանային, այլև համաշխարհային կետրոն դառնալու համար: Դիտարկվել են Չինաստանի նոր արտաքին քաղաքական հայեցակարգի գաղափարական հիմքերը, որոնք արտացոլված են տարիների ընթացքում ձևավորված «ընդհանուր շահերի հանրույթի» հայեցակարգում:

Երկրոդ գլխի երկրոդ՝ **«Չինական «փափուկ ուժի» մշակութային եվ արժեքային հիմքերը»** ենթագլխում դիտարկվում է Չինաստանի ղեկավարության կողմից վարվող մշակութային քաղաքականությունը, որը նպատակ ունի պաշտպանել չին ժողովրդին արևմտականացումից, կառուցել համախմբված ավանդական չինական հասարակություն, ինչպես նաև բարձրացնել Չինաստանի իմիջը միջազգային ասպարեզում: Շեշտադրվում է այն հանգամանքը, որ մշակութային քաղաքականությունը ենթադրում է չինական ազգի հոգևոր և

հայրենասիրական ակտիվ դաստիարակություն, հատկապես երիտասարդների միջավայրում կոլեկտիվիզմի սկզբունքի արմատավորում:

Երկրոդ գլխի երրորդ՝ **«Փափուկ ուժի» չինական հայեցակարգի առանձնահատկությունները»** ենթագլուխը նվիրված է չինացի տեսաբանների՝ «փափուկ ուժի» նկատմամբ մոտեցումների դիտարկմանը: Բացահայտվել է, որ չինացի գիտնականների շրջանակում գոյություն ունի «փափուկ ուժի» ընկալման երկու ուղղություն՝ մշակութային և քաղաքական, որոնք տարբերվում են միմյանցից բովանդակությամբ և շեշտադրումներով: Այդ պատճառով Չինաստանի քաղաքական էլիտան, իր հերթին, աշխատում է համադրել այդ մոտեցումները, քանի որ քաղաքականությունը և մշակույթը փոխլրացնում են միմյանց և ձևավորում են չինական «փափուկ ուժի» ամբողջական հզորությունը:

Ատենախոսության երրորդ՝ **«Չինաստանի «խելամիտ ուժի» կիրառումը ժամանակակից փուլում»** գլուխը բաղկացած է երեք ենթաբաժիններից, որոնցում դիտարկվում է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագիրը որպես Չինաստանի «խելամիտ ուժի» քաղաքականության կարևոր բաղադրիչ, Հարավային Կովկասի, մասնավորապես Հայաստանի, մասնակցության ներուժը այդ ծրագրում, ինչպես նաև Հայաստանի «փափուկ ուժի» արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը:

Ատենախոսության երրոդ գլխի առաջին՝ **«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի էությունն ու աշխարհատնտեսական նշանակությունը»** ենթագլխում դիտարկվում է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը որպես Չինաստանի կողմից առաջարկված «ընդհանուր ճակատագրի հանրույթի» գաղափարի ֆիզիկական հիմք, ներկայացվում է այդ գլոբալ ծրագրի ենթակառուցվածքը: Բացահայտվել է այն հանգամանքը, ըստ որի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության իրագործումը կապված է եվրասիական ողջ տրանսպորտային ցանցում որևէ պետության մենաշնորհային դիրքի բացառման խնդրի հետ, ինչի հետևանքով կշահեն որոշ պետություններ, որոնք չեն գտնվում հիմնական տրանսպորտային երակների վրա:

Ատենախոսության երրոդ գլխի երկրորդ՝ **«Հարավային Կովկասի ներգրավվածության առանձնահատկությունները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրում»** ենթագլխում ներկայացվում են Հարավային Կովկասի երկրների, մասնավորապես Հայաստանի, ներգրավվածության աստիճանը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրում: Հիմնավորվում է այն դրույթը, որ Հայաստանում կառուցվող «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղին քաղաքական տեսանկյունից կարող է այլընտրանք դառնալ Հարավային Կովկասում գոյություն ունեցող կոմունիկացիաներին: Դրա հետ մեկտեղ բացահայտվում են տարածաշրջանում

չինական «փափուկ ուժի» կիրառման ոչ տնտեսական բնույթի միջոցները, որոնք տնտեսական բաղադիչի հետ մեկտեղ ներառված են այս ծրագրի մեջ և իրագործվում են Կոնֆուցիուսի ինստիտուտների շնորհիվ:

Ատենախոսության երրոդ գլխի երրորդ՝ **«Հայաստանի «փափուկ ուժի» քաղաքականության մշակութային-քաղաքակրթական ակունքները. Հայաստանի կողմից «փափուկ ուժի» չինական գործիքակազմի կիրառման հեռանկարները»** ենթագլխում բացահայտվում են պատմության ընթացքում Հայաստանի և Չինաստանի կողմից կիրառված «փափուկ ուժի» քաղաքականության ընդհանրությունները: Ուսումնասիրվում է Չինաստանի «փափուկ ուժ» կիրառելու հաջողված փորձը չինական սփյուռքի օգնությամբ, որը կարող է ընդօրինակվի Հայաստանի կողմից: Հիմնավորվում է այն դրույթը, ըստ որի Հայաստանի և Չինաստանի «փափուկ ուժի» ռազմավարությունները հենված են մշակութային և քաղաքակրթական առանձնահատկությունների վրա, ուղղված են ինչպես «դեպի դուրս»՝ արտաքին աշխարհ, այնպես էլ «դեպի ներս»՝ սեփական ժողովրդի ինքնությունն ու միասնությունը պահպանելուն:

Եզրակացությունում ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, տեսական և գործնական նշանակություն ունեցող եզրհանգումները, որոնցից, մասնավորապես առաձնացվում են հետևյալները.

• «Փափուկ ուժի» հասկացույթի շարադրումը Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայի կողմից 1990 թ. նպատակ ուներ ԱՄՆ նոր աշխարհաքաղաքական պայմաններում ԱՄՆ-ի դերը վերահիմաստավորելու: Ջ. Նայի՝ «փափուկ ուժի» սահմանումը յուրովի տարբերվում է ազդեցության այլ տեսակներից: Համաձայն Նայի՝ գոյություն ունի ուժի երեք տեսակ. հարկադրանքի ուժ (իր կամքը պարտադրելը և ճնշելը կոշտ ուժի միջոցով), համոզումի ուժ (նյութական ռեսուրսների հաշվին համոզելը) և մշակութային ազդեցության կամ մշակութային դրդման ուժ (դրդել մարդուն կամովի ցանկանալ այն, ինչ ինքդ ես ցանկանում): Մեր կարծիքով, հենց մշակութային ազդեցության ուժն է լայն իմաստով (ապրելակերպ, նորմեր ու արժեքներ) ավելի ստույգ արտահայտում «փափուկ ուժի» էությունը, որը ուղղված է ազգերին ու ժողովուրդներին դրդելու կամովի ընդունել քաղաքականության այլ սուբյեկտի տեսակետները:

• «Փափուկ ուժը» իրենից ներկայացնում է ուրիշների վրա ազդեցություն գործելու ունակություն՝ դաշնակիցներ գտնելու, օրակարգ մշակելու, համոզելու, գրավելու միջոցով՝ նպատակ ունենալով հասնելու նախընտրելի արդյունքի: «Փափուկ ուժը» հենվում է ուրիշների նախապատվությունները ձևավորելու ունակության վրա: «Փափուկ ուժի» ռեսուրսները կապված են դաշնակիցներ

գրավելու ունակության հետ, մինչդեռ «կոշտ ուժի» ռեսուրսները սովորաբար նմանադրվում են հարկադրիչ վարքագծի հետ (պատժամիջոցներ, կաշառում, ուժի կիրառում):

• Գոյություն ունի «փափուկ ուժի» ընկալման երկու ուղղություն. արտաքին (վարքագծի նորմեր, կենցաղ) և խորքային (արժեհամակարգ): Արտաքին հատկանիշներն ամենահեշտն են ընկալվում, սակայն, միևնույն ժամանակ, հնարավորություն չունեն ձևավորելու որակապես նոր մշակույթ կամ սոցիալական նոր իրականություն: Այդ իսկ պատճառով արտաքին հատկանիշները չեն կարողանում փոփոխել մարդկանց վարքագիծը և ազդել պետության արտաքին քաղաքական կողմնորոշման վրա: Խորքային ազդեցությունը «փափուկ ուժի» իրականացման առումով շատ ավելի բարդ ու բազմապլանային է: Այն արմատապես փոխում է մտածելակերպն ու գիտակցությունը:

• «Փափուկ ուժի» հայեցակարգի ստեղծումը հիմնականում ուղղված էր արևմտյան ազատական արժեհամակարգի տարածմանը և, որպես հետևանք, Արևմուտքի ազդեցության ամրապնդմանը աշխարհում: Սակայն այլ տերությունների կողմից, այդ թվում Ռուսաստանի և Չինաստանի, «փափուկ ուժի» կիրառման հետևանքով դրա բովանդակությունը ենթարկվեց որոշակի փոխակերպումների: Այսպես, «փափուկ ուժը» դարձավ նաև սեփական արժեհամակարգի պահպանման և արևմտյան արժեքներից պաշտպանվելու գործիք:

• «Փափուկ ուժի» էության հիմնախնդրին անդրադարձել են շատ հետազոտողներ տարբեր երկրներից, մասնավորապես չինացի տեսաբանները, որոնք յուրահատուկ մոտեցում են մշակել «փափուկ ուժի» վերաբերյալ: Չինացի վերլուծաբանները հակված են դիտելու «փափուկ ուժը» ոչ միայն որպես արտաքին քաղաքական նպատակներին հասնելումիջոց, այլև ազգային համախմբման ու նույնականացման, հասարակական բարոյականության ամրապնդման, կրթության որակի բարելավման միջոց՝ ի շահ ներքաղաքական ինստիտուցիոնալ շինարարության:

• Կարելի է առանձնացնել «փափուկ ուժի» իրագործման չորս հիմնական մեթոդ՝ մշակույթ և հանրային դիվանագիտություն, ՀԼՄ-ներ, համացանց և սոցիալական ցանցեր, կրոն: Մշակույթի շնորհիվ հնարավոր է երկխոսություն հաստատել երկրների և ժողովուրդների միջև և օգնում է նրանց ավելի ճանաչելի դարձնել միմյանց համար: Հանրային դիվանագիտությունը նախատեսում է հասարակության և ոչ պետական հաստատությունների ավելի աշխույժ մասնակցությունը արտաքին քաղաքականության հարցերի քննարկումներին: Տեղեկատվական քաղաքականության օգնությամբ հեշտությամբ կարելի է ձևավորել

հասարակական աշխարհայացք այս կամ այն երկրում: Կրոնը կարող է դառնալ համախմբման կարևորագույն գործոն, հատկապես ավանդական հասարակություններում:

• «Փափուկ ուժի» քաղաքականությունը կարող են իրականացնել ոչ միայն մեծ և զարգացած, այլև փոքր երկրները, որոնք ցանկանում են ավելի ճանաչելի դառնալ միջազգային հանրության համար և պաշտպանել իրենց արտաքին քաղաքական շահերը: Ընդ որում, նյութական ռեսուրսների սահմանափակության պատճառով փոքր երկրների «փափուկ ուժի» ռազմավարության մեջ առաջին պլան են մղվում մշակութային և քաղաքակրթական գործոնները:

• Արևմտյան երկրները իրենց «փափուկ ուժի» ռազմավարության շրջանակներում քարոզում են նրանց քաղաքական համակարգը, ապրելակերպը և ժողովրդավարական սկզբունքները, որոնք հիմնված են, որպես կանոն, ազատական արժեհամակարգի վրա: Ընդ որում, տվյալ ռազմավարության հաջողությունը զգալիորեն ամրապնդվում է արևմտյան երկրների տնտեսական զարգացման բարձր մակարդակով, ինչը և դարձնում է արևմտյան գաղափարները և ապրելակերպը գրավիչ որոշ մարդանց համար:

• Չինաստանը, ի տարբերություն Արևմուտքի, հիմնվու իր «փափուկ ուժի» ռազմավարության մեջ շեշտադրումը դնում է քաղաքակրթության, պատմության և լեզվի հարստության վրա: Հիմնական պատճառը կայանում է նրանում, որ Չինաստանի քաղաքական համակարգը դեռևս բավական գրավիչ չէ, իսկ չինացիների կենսամակարդակը ներկա պահին բարձր չէ: Սակայն պետք է նշել, որ Չինաստանի ներքին քաղաքական կայունությունը, ներկայիս մարտահրավերներին արագ արձագանքելու ունակությունը և երկարաժամկետ զարգացման ռազմավարության առկայությունը կնպաստեն երկրում առկա խնդիրների լուծմանը, ինչը կդարձնի Չինաստանը շատ ավելի գրավիչ պետություն մոտակա ապագայում:

• Վերջին տասնամյակներում Չինաստանի բազմապատկված տնտեսական հզորությունը լրջորեն փոխել է երկրի արտաքին քաղաքական օրակարգը: Այսօր չինացի քաղաքագետների շրջանակներում հնչում է կարծիք, որ ապագայում կձևավորվի «մեկ գերտերություն՝ բազմաթիվ ուժեղ տերություններ» ձևաչափով աշխարհակարգ: Ընդ որում, բևեռներից մեկում տեղ է տրվում Չինաստանին, թեև նախկինում բավականին հաճախ էր հայտարարվում, որ Չինաստանը նպատակ չունի ձգտելու «բևեռի» կարգավիճակի, ինչպես որ չի ձգտում «գերտերության» կարգավիճակի:

• Չինական ռազմավարական մշակույթի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նախապատվությունը տրվում է ճկուն քաղաքականությանը, ինչը

դրսևորվում է ազդեցության տարածման «ուղղակի» և «անուղղակի» եղանակների զուգակցմամբ՝ հակառակորդից միշտ մեկ քայլ առաջ լինելու և հաջողության հասնելու համար նվազագույն ռեսուրսներ օգտագործելու նպատակով:

• Չինաստանի ղեկավարները հասկանում են, որ հնարավոր չէ երկիրը վերածել գլոբալ բևեռի առանց խոշորագույն տարածաշրջանային կենտրոն դառնալու: Այդ իսկ պատճառով վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը սկսել է ակտիվանալ կարևորագույն արտաքին քաղաքական նպատակների իրագործման հարցում՝ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցության խորացում, տնտեսական ինտեգրման աշխուժացում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ:

• Չինաստանի ակտիվ արտաքին քաղաքականությունը ստացավ նաև իր գաղափարական հիմնավորումը, երբ ՉԺՀ նախագահ Հու Ձինթաոն առաջ քաշեց «ներդաշնակ աշխարհ կառուցելու» գաղափարը, որը հետագայում իր զարգացումը ստացավ Սի Ծինփինի առաջարկած «ընդհանուր ճակատագրերի հանրույթի» հայեցակարգում: Այն հիմնված է փոխշահավետ միջազգային համագործակցության կառուցման և հեգեմոնիզմի բացառման վրա և նպատակ ունի ստեղծել «ընդհանուր շահերի հանրույթ» և «ընդհանուր պարտավորությունների հանրույթ», ինչը հիմք կհանդիսանա «դրական հանրագումարով» հարաբերությունների ստեղծման համար որպես սառը պատերազմի «զրոյական հանրագումարով մտածողության» այլընտրանք: Պետք է նշել, որ, ի տարբերություն այլ ուժային կենտրոնների, Չինաստանը ձգտում է չպարտադրել համաշխարհային զարգացման իր տեսլականը և ուշադրությունը սևեռում է առաջին հերթին համատեղ նախագծերին, այլ երկրների շահագրգիռ մասնակցության վրա:

• Վերջին երկու տասնամյակների ընթացքում ՉԺՀ ղեկավարությունը հռչակեց մշակույթի «փափուկ ուժի» ներուժի ամրապնդման ուղի, ինչը պետք է ձևավորի արտասահմանյան լսարանի մոտ դրական վերաբերմունք Չինաստանի մասին: Ընդ որում ղեկավարության կողմից գիտակցվում է, որ չինական արժեքներն ու ավանդույթները չեն կարող դրականանորեն ազդել օտարերկրացիների վրա, քանի դեռ դրանք գրավիչ չեն դարձել հենց չինացիների համար:

• Արևմուտքի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման պայմաններում չինական հասարակությունը բախվեց «արևմտականացման» և «պառակտման» վտանգի հետ, ինչը արտացոլվում է օտարերկրյա ուժերի կողմից ստեղծվող լարվածությամբ Տայվանում, Տիբեթում և Սինցզյան-Ույղուրյան ինքնավար շրջանում, արևմտյան արժեհամակարգի և կենսակերպի ներթափանցմամբ: Ի պատասխան երկիրը «պառակտելու» փորձերին Չինաստանը սկսեց վարել

«մշակույթի փափուկ ուժի» քաղաքականություն, որը կարող է դառնալ ոչ միայն օտարերկրյա լսարանի կողմից երկրի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման գործիք, այլև հենց չին ժողովրդի համախմբման և «արևմտականացումից» պաշտպանվելու միջոց:

• Հատուկ ուշադրություն է դարձվում «առանցքային արժեքներին», որոնք հենվում են կոնֆուցիական բարոյագիտության և հասարակության մասին ուսմունքի վրա, որում առկա են պարտքի, արդարության, բարոյականության ու պատասխանատվության մասին իդեալները: Դրանք ուղղված են չինական ազգի հոգևոր դաստիարակությանը, ինչը ենթադրում է հայրենասիրության և կոլեկտիվիզմի զարգացում, ազգային ինքնահարգանքի, ինքնավստահության ու հպարտության ամրապնդում, ժողովրդի հայրենասիրական էնտուզիազմի վերածում պրակտիկ գործողությունների՝ ուղղված Չինաստանի բարգավաճմանը:

• Վերջին տարիների ընթացքում նոր քաղաքականությունը միավորվեց նոր ինստիտուտների հետ, ինչպիսին է Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկն ու Շանհայի համագործակցության կազմակերպությունը, և նոր նախաձեռնությունների հետ, ինչպիսին է տրանսպորտային գոտին, որպեզի կառուցվի «ընդհանուր ճակատագրի հանրույթի» ֆիզիկական հիմքը: Այսպես առաջացավ Նոր Մետաքսի ճանապարհի ստեղծման գաղափարը, կամ ինչպես այսօր են անվանում այս հայեցակարգը՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ», որտեղ մասնակցում է շուրջ 150 երկիր: Այս նախագծի իրագործումը կապված է եվրասիական ողջ տրանսպորտային ցանցում որևէ պետության մենաշնորհային դիրքի բացառման խնդրի հետ: Այդ պատճառով, բացի հիմնական տրանսպորտային միջանցքներից, կառուցվում են լրացուցիչ երթուղիներ շրջանցելու հնարավորություն ունենալու համար: Այս դեպքում, անկասկած, կշահի Հայաստանը, որը չի գտնվում հիմնական տրանսպորտային երակի վրա:

• Հարավկովկասյան տարածաշրջանը իր յուրահատուկ աշխարհագրաական դիրքի շնորհիվ պատմականորեն եղել է և շարունակում է մնալ քաղաքակրթությունների և տարրբեր ուղղություններով գնացող ճանապարհների խաչմերուկ: Այդ իսկ պատճառով Հարավային Կովկասի տարածքով անցնող կոմունիկացիաները այսօր կարող են հիմք հանդիսանալ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի իրականացման համար: Ընդ որում, յուրաքանչյուր հարավկովկասյան պետություն՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, իր առանձնահատկությունները օգտագործելով, հնարավորություն ունի իր դերակատարումը ունենալ այս գլոբալ նախագծում:

• Վերջերս առաջացած կոմունիկացիաների վերականգնման հիմնախնդիրը սերտ կապված է լուրջ աշխարհաքաղաքական ռիսկերի հետ, քանի որ կարող է օգտագործվել Թուրքիայի կողմից նրա ազդեցությունը դեպի Արևելք տարածելու և պանթյուրքիստական ու պանիսլամիստական նախագծերը իրականացնելու համար, ինչը չի կարող չմտահոգել Ասիայի շատ պետություններին: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է լուծել երկաթգծի հայկական հատվածի վերահսկման խնդիրը, որը պետք է իրագործվի Հայաստանի կողմից, իսկ անվտանգությունը կարող է ապահովվել ռուսական և հայկական խաղաղապահ ուժերի կողմից: Տվյալ միջոցառումների իրականացման շնորհիվ Հայաստանի տարածքային ամբողջականությունը չի տուժի, իսկ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ազդեցության տարածման հնարավորությունները նվազագույնը կլինեն:

• Հայաստանում նախատեսվում են երկու լոգիստիկ երթուղիներ՝ «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղին և «Հայաստան-Իրան» երկաթուղին, որոնք կգործեն որպես «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի մաս: «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու շնորհիվ (այդ թվում Վրաստանում կառուցվող Քվեշեթի-Կոբի հատվածի) կձևավորվի բարձր թողունակությամբ երթուղի միջազգային բեռնափոխադրումների համար: «Հայաստան-Իրան» երկաթուղու կառուցումը դեռևս հարցականի տակ է, քանի վոր տարածաշրջանում գրեթե պատրաստ է երկաթուղային ցանցը, որը կապում է Իրանը, Ադրբեջանն ու Վրաստանը: «Հայաստան-Իրան» երկաթուղու կառուցումն ավելի շահավետ է աշխարհաքաղաքական տեսանկյունից, քանի որ այն այլընտրանք է Հարավային Կովկասում արդեն գոյություն ունեցող մայրուղիներին: Սակայն պետք է խոստովանել, որ այս այլընտրանքի գործառույթը կարող է իրականացնել արդեն կառուցվող «Հյուսիս-Հարավ» մայրուղին:

• «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու կառուցումը Հայաստանի տարածքով ակտուալ է դառնում նաև Հնդկաստանի շնորհիվ, որը ցանկություն հայտնեց մասնակցել «Հյուսիս-Հարավ» միջանցքում և սկսեց աստիճանաբար խորացնել հարաբերությունները Իրանի և Հայաստանի հետ: Հնդկաստանի մասնակցությունը «Հյուսիս-Հարավ» նախագծում կնպաստի Հայաստանի տարածքով բեռնափոխադրումների աճին և, մեծ հավանականությամբ, կմեծացնի ոչ միայն «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու, այլև «Հայաստան-Իրան» երկաթուղու շահութաբերությունը, և այդ նախագծերը ավելի հետաքրքիր կդառնան ներդրողների համար, այդ թվում Չինաստանից:

• Տնտեսական բաղադրիչի հետ մեկտեղ, «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի մեջ մտնում է նաև չինական լեզվի, մշակույթի և պատմության

ճանաչելիությանը ուղղված քաղաքականությունը, որը իրագործվում է ոչ միայն այն երկրներում, որոնք անմիջապես մասնակցում են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծին, այլև հարևան տարածաշրջաններում: Այսպես, ՉԺՀ-ն աշխարհի շատ երկրներում, մասնավորապես Հարավային Կովկասի երկրներում, բացում է կրթամշակութային կենտրոններ – Կոնֆուցիոսի ինստիտուտներ, որոնց օգնությամբ ուսանողները ծանոթանում են չինական մշակույթի, պատմության ու լեզվի հետ և, արդյունքում, ավելի դրական վերաբերմունք են ցուցաբերում Չինաստանի և նրա աշխարհաքաղաքական նախագծերի նկատմամբ:

• Համեմատելով պատմական գործընթացները Հայաստանում և Չինաստանում, կարող ենք եզրակացնել, որ երկու ժողովուրդների էլիտաները այս կամ այն կերպ իրագործել են «փափուկ ուժի» քաղաքականություն, որն ուղղված էր սեփական ժողովրդի ինքնությունը պահպանելուն, այսինքն, ուղղված էր «դեպի ներս»: Սակայն եթե Հայաստանում դրա նպատակը այլ ժողովուրդների կողմից ստրկացման իրավիճակներում ձուլումը կանխելն էր, ապա Չինաստանի դեպքում՝ ասիական հսկայածավալ տարածքներում բնակվող ժողովրդի միասնականությունը պահպանելը:

• Ուշագրավ է Չինաստանի «փափուկ ուժ» կիրառելու փորձը ինչպես երկրի ներսում, ուղղված միասնական, ավանդական և բարոյական հասարակության կառուցմանը, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ, որի հիմնական գործիքներից է իր անկրկնելի քաղաքակրթական արժեհամակարգի քարոզչությունը, որն իրականացվում է, ի թիվս այլ միջոցների, նաև չինական սփյուռքի օգնությամբ, որի հետ շատ սերտ համագործակցում են թե ՉՃՀ-ի պաշտոնական իշխանությունները, ստեղծելով տարբեր լոբբիստական խմբեր, թե Չինաստանի բնակչությունը, որը հիմնվում է կլանային կառուցվածքի և ընտանեվարական ավանդույթների վրա: Դրա շնորհիվ սփյուռքը փաստացի դարձել է չինական հասարակության անբաժան մաս և Չինաստանի սոցիալ-տնտեսական կյանքի լիարժեք մասնակից:

• Չինաստանի «փափուկ ուժ» կիրառելու հաջող փորձը կարող է օգնել Հայաստանին, մի կողմից, սերմանել ազգային ավանդական արժեհամակարգը հենց Հայաստանում՝ ժողովրդի ինքնությունն ու միասնությունը պահպանելու համար, մյուս կողմից, զարգացնելու հարաբերություններն իր Սփյուռքի հետ, որը հինգ անգամ ավելի մեծ է, քան բուն Հայաստանի բնակչությունը և գտնվում է բոլորովին այլ սոցիոմշակութային միջավայրում, ինչի պատճառով օրակարգային է դառնում սփյուռքի ներկայացուցիչների շրջանում հայապահպանության հարցը և պատմական հայրենիքի հետ հոգևոր-մշակութային կապը պահպանելու խնդիրը:

• «Փափուկ ուժը», առավել ևս, եթե այն ուղղված է «դեպի ներս», անհաժեշտ է դնել համակարգված գաղափարական հիմքերի վրա, հակառակ դեպքում «փափուկ ուժի» արդյունավետությունը շատ ցածր կլինի: Մասնավորապես, Հայաստանի «փափուկ ուժը» պետք է հինված լինի այնպիսի գաղափարների վրա, որոնք հայ ժողովրդին օժտում են աշխարհի հնագույն քաղաքակրթություններից մեկի կարգավիճակով: Հայ ժողովուրդը պետք է ներկայանա ոչ թե որպես մշտական փորձությունների ենթարկվող ազգ, այլ որպես ժողովուրդ, որը ձգտում է գիտակցել իր դրական դերը մարդկության զարգացման գործում: Գաղափարական այսպիսի կողմնորոշումը հնարավորություն է տալիս համախմբելու ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլև աշխարհասփյուռ հայությանը:

• Հայկական սփյուռքը մեծ հաջողությունների է հասել «փափուկ ուժի» կիրառման հարցում, մասնավորապես, իր լոբբիստական կառույցների շնորհիվ, որոնց գործունեությունը լուրջ դերակատարում ունեցավ տարբեր երկրների կողմից հայանպաստ որոշումներ ընդունելու հարցում: Սակայն այս հաջողությունն ամրապնդելու համար «փափուկ ուժ» պետք է կիրառի նաև Հայաստանի Հանրապետությունը սեփական գրավչությունը մեծացնելու համար ոչ միայն օտարերկրացիների, այլև սփյուռքի շրջանում: Հարկավոր է ուշադրություն դարձնել տնտեսական զարգացմանը, արտաքին ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, վերականգնել սոցիալական արդարությունը, հաստատել օրենքի գերակայության սկզբունքները: Այս ամենը կբարձրացնի Հայաստանի իմիջը և օտարերկրյա մեր հայրենակիցներին կդարձնի Հայաստանի տնտեսական կյանքի ակտիվ մասնակիցներ:

Հենվելով հետազոտության արդյունքների վրա, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել հետևյալ գործնական **առաջարկությունները**.

• Հայաստանին անհրաժեշտ է մշակել ինչպես արտաքին քաղաքականության հայեցակարգ, այնպես էլ ձևավորել «փափուկ ուժի» կիրառման հստակ ռազմավարություն, որոնք հնարավորություն կտան արդյունավետ օգտագործել «փափուկ ուժի» ողջ ներուժը:

• Հայաստանի «փափուկ ուժի» ռազմավարության մշակման ընթացքում, հետևելով Չինաստանի օրինակին, պետք է շեշտադրել պատմամշակութային առանձնահատկությունները՝ որպես առաջին քրիստոնյա երկիր և յուրահատուկ քաղաքակրթություն հանդիսանալու հանգամանքները:

• Հայաստանի «փափուկ ուժի» կիրառման հիմքերից մեկը կարող է դառնալ միջազգային ասպարեզում մեր երկրի հանդես գալը որպես ցեղասպանությունների դեմ պայքարող համաշխարհային հանրության առաջամարտիկ:

• «Փափուկ ուժի քաղաքականությունը առավել արդյունավետ դարձնելու համար Չինաստանի օրինակով անհրաժեշտ է նախևառաջ բարձրացնել քաղաքացիների կրթամշակույթային մակարդակը, համակարգված դաստիարակչական աշխատանք ծավալելով հատկապես երիտասարդական միջավայրում:

• Հայաստանի տնտեսական զարգացման քաղաքականության առաջնային նպատակն է «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու կառուցումը, որը ամենաիրատեսական տարբերակն է ՀՀ-ն միջազգային առևտրի ակտիվ և միաժամանակ ապահով կարգավիճակով մասնակից դառնալու համար:

• Հայ-թուրքական հարաբերությունների հաստատմանը զուգահեռ աշխաատնքներ տանել Վրաստանի հետ տրանսկասպյան միջանցքի մասնակից դառնալու ուղղությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Енгоян П.** Инструменты «мягкой силы» Республики Армения, Проблемы национальной безопасности в условиях глобализации и интеграционных процессов (междисциплинарные аспекты): международный научный форум (3-5 ноября). Издательский дом РАУ, Ереван, 2017, с. 282-303.
2. **Енгоян П.** Геоэкономические аспекты «Нового шелкового пути», Вестник Юридического факультета Южного федерального университета; ФГОУ ВПО «Южный федеральный университет». Ростов-на-Дону: Южный федеральный университет, т. 5, № 1, 2018, с. 59-65.
3. **Енгоян П.** Фактор «мягкой силы» в образовательной политике стран Евразийского Союза (на примере Российской Федерации и Республики Армения), Вестник университета Месроп Маштоц. Издательсво «Лимуш», Ереван, 2018, с. 89-97.
4. **Енгоян П.** Основной инструментарий применения «мягкой силы» в мировой политике, Вестник Ереванского университета: Международные отношения, Политология; Ереван, 2019, № 3, с. 40-50.
5. **Ենգոյան Փ.** «Փափուկ ուժի» ժամանակակից հայեցակարգի ձևավորումը, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2020, № 2 (32), էջ 61-74:
6. **Енгоян П.** Формирование современной внешнеполитической концепции КНР, Вестник РАУ (Гуманитарные и общественные науки), Ереван, 2020, № 2, с. 21-35.
7. **Ենգոյան Փ.** Չինական «փափուկ ուժի» մշակութային և արժեքային հիմքերը, Պատմություն և քաղաքականություն (Գիտական հանդես),

«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն, Երևան, 2021, № 2 (13), էջ 128-140:
8. **Ենգոյան Փ.** «Փափուկ ուժի» չինական հայեցակարգի էությունը, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2021, № 1 (34), էջ 73-84:
9. **Ենգոյան Փ.** Հայաստանի «փափուկ ուժի» քաղաքականության մշակութային-քաղաքակրթական ակունքները, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2022, № 1 (37), էջ 34-45:

Енгоян Пайлак Ашотович

Фактор «мягкой силы» во внешнеполитической концепции Китая

Резюме

Профессор Гарвардского университета Джозеф Най впервые раскрыл концепт «мягкой силы», под которой он понимал способность государства формировать предпочтения других акторов мировой политики, используя привлекательность своей культуры и образа жизни в их глазах. Дж. Най разработал концепцию «мягкой силы» с целью преобразовать внешнюю политику США, которая ранее была преимущественно ориентирована на американское военное превосходство.

Многие современные государства для достижения своих внешнеполитических целей широко используют политику «мягкой силы». Это обстоятельство дает возможность сформировать качественно новую культуру, изменяющую сознание и поведение людей и, как следствие, внешнеполитические ориентиры государств. При реализации политики «мягкой силы» используются разнообразные методы и инструменты, облегчающие решение внешнеполитических задач. В современном мире важным субъектом политики «мягкой силы» становится Китай.

Столетиями, в условиях преобладания конфуцианства, китайская внешняя политика в основном была направлена на обеспечение безопасного и обособленного развития страны. С победой социалистической революции и приобщением общественного сознания народа к мировой идеологии коммунизма у китайской элиты и большей части населения Китая сформировалось масштабное видение современного мирового политического процесса. Беспрецедентные успехи страны в деле развития собственной экономики позволили ей занять более достойное место в мировом сообществе. Были созданы необходимые предпосылки для последующей трансформации внешнеполитической концепции в сторону активизации роли Китая в мировых делах и превращению страны в один из мировых центров силы, играющей огромную роль в формировании нового миропорядка.

К вопросу о сущности «мягкой силы» обращались многие исследователи из разных стран, в том числе и из Китая. Особенностью китайского подхода является склонность рассматривать «мягкую силу» как инструмент не только внешней, но и внутренней политики. Китайские аналитики склонны рассматривать «мягкую силу» как средство для сохранения национального единства и идентичности, укрепления нравственных устоев в обществе и повышения качества образования.

Ключевым компонентом «мягкой силы» в современном Китае является культура. В середине 2000-х годов руководство КНР провозгласило курс на укрепление потенциала культуры как «мягкой силы», способной стать не только инструментом формирования у зарубежной аудитории позитивного отношения к стране, но также средством сплочения самого китайского народа. Особое внимание уделяется духовному воспитанию китайской

нации, развитию патриотизма, коллективизма, укреплению в нации самоуважения, уверенности в себе и гордости за державу, а в конечном итоге, направленности на практические действия, нацеленные на процветание Китая. Это должно способствовать укреплению позиций Китая на международной арене.

В китайской политической науке сформировались две научные школы относительно концепции «мягкой силы» – культурная и политическая. Несмотря на различия этих двух подходов, у политической и интеллектуальной элиты КНР наблюдается стремление комбинировать политику и культуру в концепции «мягкой силы» и трансформировать «мягкую силу» внутри страны в экономическую, политическую и культурную силу. Также укрепляется понимание того, что политика и культура дополняют друг друга и образуют совокупную мощь китайской «мягкой силы», где культура выступает внутренним ядром, а политика – инструментом трансляции культурного содержания.

В последние годы новая внешняя политика Китая воплотилась в новых институтах, таких как Азиатский банк инфраструктурных инвестиций и Шанхайская организация сотрудничества, в новых инициативах, таких как создание транспортных путей, которые должны стать физической основой «сообщества общей судьбы». Так родилась идея создания Нового Шелкового пути, или как сегодня называют эту концепцию «Один пояс – один путь», в которой участвуют около 150 стран. В данном случае наглядно прослеживается трансформация «мягкой силы» Китая в «умную силу» с применением экономических рычагов воздействия на эти страны.

Успешный опыт Китая, сравнительно недавно применяющего «мягкую силу» во внешнеполитической деятельности и акцентирующего культурно-цивилизационный аспект этого явления, может быть использован многими современными государствами, особенно такими, как Армения, чьи материальные ресурсы ограничены.

Paylak Yengoyan

The “soft power” factor in the foreign policy concept of China

Summary

Harvard University Professor Joseph Nye first revealed the concept of “soft power” which he describes as an ability of a state to form preferences of other actors of world policy using attractiveness of its culture and lifestyle for them. J. Nye developed the “soft power” concept in order to transform the US foreign policy, which had been primarily focused on American military superiority.

Many modern states widely use the policy of “soft power” to achieve their foreign policy goals. This circumstance makes it possible to form a qualitatively new culture that changes the consciousness and behavior of people and, as a result, the foreign policy orientation of states. During the implementation the “soft power” policy various methods and tools are used to simplify

the solution of foreign policy tasks. In the modern world China is becoming an important subject of the "soft power" policy.

By centuries in conditions of the predominance of Confucianism the Chinese foreign policy was directed on the safe and isolated development of the country. After the socialistic revolution and the inclusion of the people's public consciousness in the communist global ideology, the Chinese elite and most of Chinese people formed a large-scale vision of the modern process in world politics. Unprecedented success of the country in economic development let China take a worthier place in the world community. Essential circumstances were created for the subsequent transformation of the foreign policy concept to extension of China's role in world affairs and turning the country into one of the world centers of power, which plays a huge role in the formation of a new world order.

Many researchers from different countries, including China, have paid attention to the issue of the essence of "soft power". The peculiarity of the Chinese approach is that it considers "soft power" as an instrument of not only foreign, but also domestic policy. Chinese researchers view "soft power" as a method for preservation of national unity and identity, strengthening moral foundations in society and improving the quality of education.

Culture is the key component of "soft power" in modern China. In the mid-2000s, the leadership of the People's Republic of China proclaimed a course to strengthen the potential of culture as a part of "soft power", which might become not only a tool for forming a positive attitude toward the country among foreign audience, but also an instrument for cohesion of the Chinese people. Special attention is paid to the spiritual education of the Chinese nation, the development of patriotism, collectivism, strengthening self-esteem, self-confidence, pride in the state and, ultimately, focusing on practical actions aimed at the prosperity of China. This should help strengthen China's position in the international arena.

In Chinese political science two scientific schools have been formed regarding the concept of "soft power" – cultural and political. Despite the differences between these two approaches, the political and intellectual elite of China has plan to combine politics and culture in the concept of "soft power" and transform the "soft power" inside the country into an economic, political and cultural power. There is an understanding that politics and culture supplement each other and form the combined power of the Chinese "soft power", where culture is the core, and politics is the tool for broadcasting cultural content.

In recent years China's new foreign policy has been embodied in new institutions, such as the Asian Infrastructure Investment Bank and the Shanghai Cooperation Organization, in new initiatives, such as the creation of transport routes, which should become the physical basis for the "community of common destiny". Thus the idea of creating a New Silk Road was born, which today is called "Belt and Road Initiative", in which about 150 countries participate. In this case, the transformation of China's "soft power" into "smart power" with the usage of economic tools of influence on these countries is clearly traced.

The successful experience of China, which only recently became to use "soft power" in foreign policy and emphasize the cultural and civilizational aspects of this phenomenon, can be used by many modern states, especially as Armenia, whose material resources are limited.